ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

Austrian Development Agency

# ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ

ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

կնքված

ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

և

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ

միջև

*ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, օգոստոսի 17-ին, 2022 թ.*

Սույն Փոխըմբռնման հուշագիրը կնքվում է

*«ԵՄ Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնությունը Հայաստանում» (EU-GAIA) ծրագրի շրջանակներում,*

որը ֆինանսավորվում է Եվրոպական միության (ԵՄ) կողմից և համաֆինանսավորվում է Ավստրիական զարգացման համագործակցության (ԱԶՀ) կողմից:

Ծրագիրն իրականացվում է Հայաստանում Ավստրիական զարգացման գործակալության (ԱԶԳ) կողմից,

Հայաստանում Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի և ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ:

## I. ՆՊԱՏԱԿԸ

Սույն Փոխըմբռնման հուշագրի (այսուհետ՝ ՓՀ) նպատակն է ձևավորել համագործակցության շրջանակ՝ ***ՀՀ Լոռու մարզպետարանին*** կարողությունների զարգացման ծրագիր տրամադրելու համար:

Տվյալ շրջանակի ներքո, կողմերը մտադիր են մշակել համագործակցության և ընդհանուր հանձնառության ոգով իրականացվող հատուկ գործողություններ:

## II. ԱՌԱՐԿԱՆ

Սույն ՓՀ-ն կնքվում է Ավստրիական զարգացման գործակալության (այսուհետ՝ *«ԱԶԳ»*) և ***Լոռու մարզպետարանի*** միջև, որոնք համատեղ կոչվում են *«Կողմեր»*:

Հաշվի առնելով Լոռու մարզի գյուղական համայնքներում Կայուն/ Կանաչ գյուղատնտեսության ոլորտը զարգացնելու Կողմերի ընդհանուր շահերը՝ կողմերը եկել են համաձայնության՝ միավորել իրենց ջանքերն ու ռեսուրսները և արդյունավետ համագործակցել «ԵՄ Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնությունը Հայաստանում» (EU-GAIA) ծրագրի (այսուհետ՝ «Ծրագիր») շրջանակներում՝ տվյալ համագործակցության անհրաժեշտ արդյունքները ապահովելու համար:

Սույն Փոխըմբռնման հուշագիրը սահմանում է Կողմերի պատրաստակամությունը՝ համագործակցելու Լոռու մարզի գյուղատնտեսության զարգացման ոլորտում նորարարական/ ճշգրիտ գյուղատնտեսական տեխնոլոգիաների և փորձի մշակման և կիրառման ուղղությամբ՝ գյուղատնտեսության ոլորտում օգտագործվող անօդաչու թռչող սարքերի (գյուղատնտեսական դրոնների) և այլ համապատասխան լրացուցիչ սարքավորումների տրամադրման, ինչպես նաև տվյալ անօդաչու թռչող սարքերի շահագործման վերաբերյալ կողմերի համապատասխան անձնակազմին պատշաճ դասընթացներ տրամադրելու միջոցով:

## III. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

**Գիտակցելով** Լոռու մարզի տեխնոլոգիական կարողությունների բարելավման և ընդլայնման կարևորությունը, և

**Հատկապես, հաշվի առնելով** նորարարական և թվային գյուղատնտեսության զարգացման վերջին համաշխարհային միտումները՝ Կանաչ գյուղատնտեսության մոդելի մոտեցման առաջնահերթության միջոցով, որը խթանվում և աջակցվում է ԵՄ-ի կողմից՝ 2019թ. հոկտեմբերին մեկնարկած, ԱԶ գործակալության կողմից իրականացվող «Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնությունը Հայաստանում» (EU-GAIA) ծրագրի միջոցով,

**Նկատի ունենալով** ՀՀ Գյուղատնտեսության նոր ռազմավարությունը (2020-2029թթ.), ինչպես նաև Ավստրիական զարգացման համագործակցության և Օգնության արդյունավետության մասին Փարիզյան հռչակագրի սկզբունքը՝ գործել հաշվի առնելով գործընկեր երկրի առաջնահերթությունները,

***Կողմերը գալիս են համաձայնության՝ հետևյալ համատեղ իրականացվող նախաձեռնությունների շուրջ, որտեղ՝***

**ԱԶԳ-ը, իր EU-GAIA ծրագրի միջոցով, պատրաստ է՝**

- տրամադրել գյուղատնտեսական դրոններ և համապատասխան լրացուցիչ սարքավորումներ՝ ***Լոռու մարզպետարանին***;
- տրամադրել այդ դրոնների շահագործման վերաբերյալ անհրաժեշտ ուսուցում՝ Լոռու մարզպետարանի համապատասխան անձնակազմին:

**Լոռու մարզպետարանը պատրաստ է՝**

- ապահովել իր համապատասխան անձնակազմի ներգրավումը՝ գյուղատնտեսական դրոնների կիրառման և օգտագործման հետ կապված բոլոր անհրաժեշտ դասընթացներին;
- ապահովել EU-GAIA ծրագրի կողմից տրամադրված գյուղատնտեսական դրոնների և համապատասխան լրացուցիչ սարքավորումների հետագա պատշաճ կիրառումը՝ համաձայն գործառնական/կատարողական պլանի, որը պետք է ներառվի EU-GAIA ծրագրի և ***Լոռու մարզպետարանի*** կողմից ստեղծված և վերջինս աշխատակազմի կողմից ղեկավարվող *«Աջակցություն Լոռու մարզի համայնքներին»* *բարեգործական հիմնադրամի* միջև կնքված լրացուցիչ պայմանագրում;
- ապահովել EU-GAIA ծրագրի կողմից տրամադրված բոլոր տեխնիկական իրերի/ներդրումների/սարքավորումների պատշաճ օգտագործումը և տեխնիկական սպասարկումը, որը պետք է ներառվի EU-GAIA ծրագրի և ***Լոռու մարզպետարանի*** միջև կնքվելիք պայմանագրում;
- տեղեկացել ԱՀ գործակալությանը սույն ՓՀ-ի բարեհաջող իրականացմանը սպառնացող ցանկացած հանգամանքի մասին:

## IV. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

***Լոռու մարզպետարանը*** և ԱՀԳ-ը, ինչպես նաև Եվրամիությունը, ունեն անսահմանափակ իրավունք՝ անվճար օգտագործելու Համագործակցության շրջանակներում մշակված և տրամադրված բոլոր փաստաթղթերն ու նյութերը:

## V. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

***Լոռու մարզպետարանը*** ընդունում է, որ ԱՀԳ-ը պարտավոր է հետևել իր հիմնական գործառնական սկզբունքներին, դոնոր կազմակերպությունների կանոնակարգերին և պայմանագրային պարտավորություններին:

***Կողմերը պարտավոր են՝***

- պատշաճ կերպով կատարել իրենց պարտավորությունները և/կամ առաջադրանքները այնպես, ինչպես սահմանված և համաձայնեցված է սույն ՓՀ-ում;
- պատշաճ կերպով պահպանել յուրաքանչյուր կողմի կողմից տրամադրված և/կամ մշակված գրությունների, փաստաթղթերի, համակարգչային տվյալների, սարքավորումների և տեղեկատվության գաղտնիությունը;
- պատշաճ կերպով միմյանց ցուցաբերել աջակցություն, օգնություն և համագործակցություն՝ որոշումների կայացման գործընթացում, տրամադրելով ստույգ և թափանցիկ տեղեկատվություն;
- հարգել միմյանց կողմից ընդունված և/կամ համաձայնեցված որոշումները;
- աշխատանքի ընթացքում խստորեն պահպանել ՀՀ-ում գործող օրենքները:

***ԱԶԳ-ը պարտավոր է՝***

- ապահովել սույն ՓՀ-ի ներքո իրականացվող բոլոր համատեղ նախաձեռնությունների համակարգումը և ընդհանուր վերահսկողությունը: ԱԶԳ-ը՝ որպես դոնոր կազմակերպությունների/ԵՄ-ի հետ պայմանագիր կնքած կողմ, պատասխանատու է համատեղ նախաձեռնությունների ֆինանսական ռեսուրսների պատշաճ օգտագործման և աշխատանքների գործառնական իրականացման համար:
- հանդիսանալ և ներկայանալ որպես վերոհիշյալ ծրագրի պատասխանատու մարմին՝ դոնոր կազմակերպությունների մոտ;
- ապահովել ***Լոռու մարզպետարանի*** կողմից պաշտոնապես հայտագրված բոլոր այն միջոցների և սարքավորումների գնումները և դրանց մատակարարումը, որոնք անհրաժեշտ են Լոռու մարզի գյուղական համայնքներում գյուղատնտեսական այնպիսի ծառայությունների արդիականացման և արդյունավետ շահագործման համար, ինչպիսիք են բույսերի պահպանությունը, պարարտացումը և մշակաբույսերի տնկարկների մոնիտորինգը;
- իրավունք վերապահել վերահսկելու սույն ՓՀ-ի շրջանակներում համատեղ իրականացվող նախաձեռնությունների իրագործումը:

***Լոռու մարզպետարանը պարտավոր է՝***

- բացահայտել և ձևակերպել EU-GAIA ծրագրի կողմից նախաձեռնված և աջակցվող թվային գյուղատնտեսական ծառայությունների ծրագրի իրականացման համար ներգրավված ***Լոռու մարզպետարանի համապատասխան անձնակազմին*** անհրաժեշտ կարողությունների հստակ բացերը՝ դրանց պատշաճ և արդյունավետ իրացման նպատակով՝ կարողությունների զարգացման դասընթացների ընթացքում;
- օգնել ծրագրի իրականացման մեջ ուղղակիորեն կամ անուղղակիորեն ներգրավված մյուս կողմ(եր)ին, ներառյալ *«Աջակցություն Լոռու մարզի համայնքներին» բարեգործական հիմնադրամին,* Լոռու մարզի համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին և Լոռու մարզում գործող այլ պետական և մասնավոր կազմակերպություններին՝ ծրագրի իրականացման աշխատանքներում;
- նպաստել և աջակցել ծրագրի սահուն իրականացմանը՝ ըստ պայմանագրում ներառված և համաձայնեցված գործողությունների պլանի, որի նպատակն է սույն ՓՀ-ի շրջանակներում առաջընթացի գործողությունների արդյունավետ իրականացումը:

## VI. ՀԱՄԱՏԵՂ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Տվյալ վերահսկողության նպատակն է ապահովել համատեղ իրականացվող նախաձեռնությունների արդյունավետ իրագործումը պահանջվող ժամկետներում: Սա ենթադրում է համագործակցության շրջանակներում իրականացվող աշխատանքների համապատասխանության կանոնավոր ստուգում՝ ըստ համատեղ աշխատանքային պլանով նախատեսված արդյունքների:

***Լոռու մարզպետարանը***՝ ԱԶ գործակալության հետ համատեղ, պատասխանատու է սույն ՓՀ-ի շրջանակներում իրականացվող համատեղ նախաձեռնությունների համակարգման և ընդհանուր վերահսկողության համար:

## VII. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Ցանկացած այլ հնարավոր համատեղ նախաձեռնության ծախսերը ֆինանսավորվում են երկկողմանի որոշման համաձայն՝ ըստ անհատական համաձայնագրի, համապատասխան տեխնիկական առաջադրանքի և յուրաքանչյուր դեպքի հետ առնչվող նամակագրության:

Սույն ՓՀ-ով նախատեսված բոլոր նախաձեռնությունների ֆինանսավորումը կախված է ֆինանսական միջոցների առկայությունից և կողմերից որևէ մեկի ղեկավարության վերջնական որոշումից:

## VIII. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն ՓՀ-ը կարող է փոփոխության ենթարկվել փոխադարձ գրավոր համաձայնությամբ: Նման փոփոխությունն ուժի մեջ է մտնում կողմերի կողմից որոշված օրվանից և կազմում է սույն ՓՀ-ի անբաժանելի մաս:

## IX. ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Սույն ՓՀ-ի դրույթների կատարման և/կամ մեկնաբանման արդյունքում ծագած ցանկացած վեճ կամ տարաձայնություն կարգավորվում է բարյացակամ մթնոլորտում՝ կողմերի միջև խորհրդակցությունների կամ բանակցությունների միջոցով:

## X. ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ցանկացած կողմ իր աշխատանքը կատարում է սույն ՓՀ-ի պահանջներին համապատասխան՝ որպես անկախ մարմին, և ոչ թե մյուս կողմի ներկայացուցիչ:

Կողմերի միջև համակարգումը չի հակասում յուրաքանչյուր կողմի ներքին շրջանառության փաստաթղթերին, հատկապես կանոնադրությանը, քաղաքականությանը, դիրքորոշման փաստաթղթերին և ռազմավարություններին:

## XI. ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

- Սույն ՓՀ-ն ուժի մեջ է մտնում վերջին Կողմի ստորագրման օրվանից և շարունակում է ուժի մեջ մնալ 1 տարի ժամկետով, եթե ավելի վաղ չի դադարեցվում՝ ստորև նշված դրույթի համաձայն:
- Սույն ՓՀ-ն կարող է դադարեցվել ցանկացած ժամանակ՝ Կողմերից յուրաքանչյուրի կողմից՝ մյուս կողմին 30 (երեսուն) օր առաջ գրավոր ծանուցելով այն դադարեցնելու իր մտադրության մասին:
- Սույն ՓՀ-ի դադարեցումը չի ազդում սույն ՓՀ-ի շրջանակներում իրականացվող որևէ ընթացիկ գործունեության/ծրագրի վավերականության և տևողության վրա՝ մինչև այդպիսի գործողությունների/նախագծերի ավարտը:
- Սույն ՓՀ-ն կազմված է հայերեն և անգլերեն լեզուներով: Հայերեն և անգլերեն տեքստերի միջև անհամապատասխանության դեպքում գերակայում է հայերեն տեքստը:

Ի վկայություն որի, Կողմերը ստորագրում են սույն Փոխըմբռնման հուշագիրը:

**17 օգոստոսի 2022թ.**

**ք. Վանաձոր, ՀՀ Լոռու մարզ**

**պրն. Արամ Խաչատրյան**

**Հայաստանի Հանրապետության**

**Լոռու մարզպետ**

**17 օգոստոսի 2022թ.**

**ք. Վանաձոր, ՀՀ Լոռու մարզ**

**պրն. Պասխալիս Բոկկերս**

**«ԵՄ Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնությունը Հայաստանում» ծրագրի թիմի ղեկավար**

**Ավստրիական զարգացման գործակալություն**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

Austrian Development Agency

**MEMORANDUM OF UNDERSTANDING**

ON

PROVISION OF CAPACITY DEVELOPMENT PROJECT

TO

TERRITORIAL ADMINISTRATION OFFICE OF LORI REGION OF THE REPUBLIC OF ARMENIA

THROUGH PROVISION OF TECHNICAL ASSISTANCE AND TRAININGS

Concluded Between

THE AUSTRIAN DEVELOPMENT AGENCY

and

THE TERRITORIAL ADMINISTRATION OFFICE OF LORI REGION

*RA, Lori region, Vanadzor, 17 August 2022*

This Memorandum of Understanding signed in the framework of

the *EU Green Agriculture Initiative in Armenia (EU-GAIA) project,*

funded by the European Union (EU),

co-funded by the Austrian Development Cooperation (ADC) and

implemented by the Austrian Development Agency (ADA) in Armenia,
in cooperation with the United Nations Development Programme and the RA Ministry of Economy.

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

Austrian Development Agency

**MEMORANDUM OF UNDERSTANDING**

ON

PROVISION OF CAPACITY DEVELOPMENT PROJECT

TO

TERRITORIAL ADMINISTRATION OFFICE OF LORI REGION OF THE REPUBLIC OF ARMENIA

THROUGH PROVISION OF TECHNICAL ASSISTANCE AND TRAININGS

Concluded Between

THE AUSTRIAN DEVELOPMENT AGENCY

and

THE TERRITORIAL ADMINISTRATION OFFICE OF LORI REGION

*RA, Lori region, Vanadzor, 17 August 2022*

This Memorandum of Understanding signed in the framework of

the *EU Green Agriculture Initiative in Armenia (EU-GAIA) project,*

funded by the European Union (EU),

co-funded by the Austrian Development Cooperation (ADC) and

implemented by the Austrian Development Agency (ADA) in Armenia,
in cooperation with the United Nations Development Programme and the RA Ministry of Economy.

## I. OBJECTIVE

The aim of this Memorandum of Understanding (hereinafter referred to as *"MoU"*) is to establish a cooperation framework for providing capacity development programme to ***Territorial Administration Office of Lori Region of Republic of Armenia (RA)*** (hereinafter referred to as *"the Lori Administration").*

Under the auspices of this framework the Parties intend to develop specific activities to be implemented in a spirit of co-operation and common commitment.

## II. SUBJECT

This MoU is signed between the ***Austrian Development Agency*** (hereinafter referred to as "***ADA***") and the ***Lori Administration***, jointly referred to as "***Parties***".

Taking into consideration the common interest of the Parties to develop Sustainable/Green agriculture sector in rural communities of Lori region, the Parties have agreed to join their efforts and resources and to cooperate effectively in the framework of the EU-GAIA Project (Green Agriculture Initiative in Armenia, hereinafter referred to as "the Project") to ensure successful outcomes of its cooperation.

This MoU sets the willingness of the Parties to collaborate on development and application of innovative/precise agriculture technologies and practices in agriculture development sector of Lori region through providing of agri-drones and other relevant supplementary equipment, as well appropriate trainings on operations of these drones to the relevant staff of the "Parties.

## III. PURPOSE OF THE COOPERATION

**Recognizing** the importance of enhancing technological capacities of *the Lori Administration* and,

**Considering** particularly the recent global trends of innovative and digital agriculture development through prioritization of Green Agriculture model approach that is promoted and supported by EU through the EU-GAIA Project in Armenia, started in October 2019, implemented by ADA,

**Considering** the new Strategy on Agriculture of the Republic of Armenia (2020 - 2029), as well as the principles of the Austrian Development Cooperation and the Paris Declaration on Aid Effectiveness to work based on the priorities of the partner country,

***The Parties intend to agree upon the following joint initiatives:***

- **ADA,** through the **EU-GAIA Project,** will provide agricultural drones and its appropriate supplementary equipment to the ***Lori Administration***,
- **ADA,** through the **EU-GAIA Project,** will provide the required necessary training on operation of the above mentioned agri-drones to the relevant staff from the Lori Administration.
- The ***Lori Administration*** will ensure involvement of its own relevant staff in all required training programmes related to application and usage of the agri-drones.
- The ***Lori Administration*** will ensure further appropriate implementation of the provided by EU-GAIA project agri-drones and its appropriate supplementary equipment in accordance with the operational/performance plan which is to be indicated in the additional contract between EU-GAIA project and *"Support to Lori marz communities" Charitable fund* established by ***Lori Administration*** and managed by its staff.
- The ***Lori Administration*** will ensure the proper use and technical maintenance of the all received technical items/inputs/equipment provided by the EU-GAIA project which is indicated in the contract to be signed between EU-GAIA and the ***Lori Administration***.

- The ***Lori Administration*** will inform ADA about any circumstance which may threaten the successful implementation of this MoU.

## IV. RIGHTS OF THE PARTIES

The ***Lori Administration*** and ADA, as well as the European Union, have the unlimited right to use free of charge all the documents and materials produced and provided in the framework of the Cooperation.

## V. RESPONSIBILITIES OF THE PARTIES

The ***Lori Administration*** recognises that ADA abides by its fundamental operating principles, donor regulations and contractual obligations.

***Each Party will:***

- Duly fulfil its part of responsibilities and/or tasks as defined and agreed in this MoU
- Duly respect the confidentiality with regard to papers, documents, computer data, equipment and information given and/or produced by each party.
- Duly provide support, assistance, and cooperation to each other in decision making by providing correct and transparent information.
- Duly respect the decisions taken and/or agreed by the parties.
- Work strictly in conformity with the prevailing laws in Armenia.

***ADA will:***

- be responsible for the coordination and the overall supervision of all joint initiatives falling under this MoU. As ADA is the organization that signed the contract with the donor/EU, ADA is considered as the responsible agency for the correct financial and operational implementation of the joint initiatives.
- be the responsible body relating to the aforementioned project to the donors.
- be responsible in arrangement of procurement and delivery of all officially required by the ***Lori Administration*** inputs and equipment for the modernization and efficient operations of agricultural services such as plant protection, fertilization and monitoring on crop plantations in the Lori Region rural communities.
- have reserved rights to monitor the implementation of the joint initiatives within this MoU.

***The Lori Administration will:***

- be responsible in identification and formulating the precise capacity needs of ***the Lori Administration*** relevant staff involved in the implementation of digital agri-services project initiated and support by EU-GAIA project to address them properly and effectively during the capacity development trainings,
- facilitate the work of the other Party/ies which might be directly or indirectly involved in the project implementation, including *"Support to Lori marz communities" Charitable fund,* Lori region communities' Local authorities and other public and private organizations based in the Lori region
- facilitate and support in smooth delivering of the project in accordance with agreed action plan indicated in the contract aimed at successful implementation and progress activities that fall within this MoU.

## VI. OVERSIGHT OF THE JOINT INITIATIVES

The purpose of the Oversight is to ensure that the joint initiatives are implemented in a timely and efficient manner. This implies regular revision of the correspondence of activities implemented under the cooperation to the results envisaged by the joint workplan.

The ***Lori Administration*** jointly with ADA will be responsible for the coordination and the overall supervision of the joint initiatives undertaken within the framework of this MoU.

## VII. FUNDING

The costs of any other possible joint initiatives will be funded as mutually determined by individual agreement and per respective Terms of Reference and exchange of letters on case-by-case bases.

All initiatives under this MoU will be subject to the availability of funds and final decision of the management of either Party.

## VIII. AMENDMENTS

This MoU may be modified or amended by mutual consent in writing. Such amendment will come into effect on such date as determined by the Parties and will form an integral part of this MoU.

## IX. SETTLEMENT OF DISPUTES

Any dispute or difference arising out of the implementation and/or the interpretation of the provisions of this MoU will be settled amicably by consultation or negotiation between the Parties.

## X. RELATIONSHIP OF PARTIES

Any Party will perform its work as required under this MoU as an independent body and not as a representative of the other.

Coordination between Parties will not go against each Party's reference internal documents, especially charters, policies, positioning papers and strategies.

## XI. COMMENCEMENT AND TERMINATION

- This MoU will come into effect on the date the last Party signs and will remain effective for a period of 1 year, unless terminated earlier in accordance with the provision mentioned below.
- This MoU may be terminated at any time by either Party, by giving 30 (thirty) days' written notice to the other of its intention to terminate it.
- The termination of this MoU will not affect the validity and duration of any ongoing activities/projects implemented under this MoU until the completion of such activities/projects.
- This MoU is drawn up in the Armenian and English languages. In the case of a discrepancy between the Armenian and English texts, the Armenian text shall prevail.

IN WITNESS, WHEREOF, the Parties have signed this Memorandum of Understanding.

**17 August 2022, Vanadzor, Lori region, RA**

**Mr. Aram Khachatryan**

**Governor /Marzpet of Lori region**

**Republic of Armenia**

**17 August 2022, Vanadzor, Lori region, RA**

**Mr. Paschalis Bokkers**

**Team leader**

**"EU Green Agricultural Initiative in Armenia" (EU-GAIA) project**

**Austrian Development Agency**